

Հոսովի ոսկիրով եւ արծաթով:»(1)

Թէեւ զուրկ մանրամասնութիւններէ, Բսէնօֆօն, Ստրարօն, Պլիննոս եւ ուրիշ հին պատմիչներ կը վիհայեն, որ Հայերը վաճառականութեամբ կ'երթային Հնդկաստան, Թուրքեստան, Բախարիա եւ Արեւելեան Ասիոյ այլ կողմերը:

Հոսով իր հին փառքի օրերուն կը ստանար շատ մը արեւելեան ապրանքներ «փղոսկր, բամպակ, մետաքս, մարգարիտ, խեժ, համեմ»: (2) Իրաւ է որ «Զինաստանի հետ թէեւ կանոնաւոր յարաբերութիւն զեռ չէր հաստատուած, այդ հին ժամանակներուն, սակայն, Սէրէններուն մետաքսը, որոնք Դիպէթի հիւսիսային արեւմտեան կողմը կը բնակէին, զլիսուորարար ցամաքի ճանապարհով Սիւրբիա

կը բերուէր, ուր գործուելէ վերջ կ'արտանուէր» (3) Հոսով կամ այլուր:

Հայաստան իր գիրքով, իր բնակչութեան ճարտարարուեստագիտութեամբ եւ վաճառականութեամբ զլիսուոր ուղին էր Ասիա-Եւրոպա առեւտուրին: Կարեւոր հանգրուաններ էին Արտաշատ (Դուին), Արծըն: Ըստ Ստրարօնի հայկական առեւտուրի վաճառանոց մըն էր Կոմանա: Կարեւոր զինուորական ուղիներ երկիրը ճամբաներու ցանցով մը կը կապէր, նոյն առեւտանոց մեծ մասին զինուորական հանգամանքը ապահովութեամբ կ'օժտէր: Զինուորական ճանապարհ մըն էր Երզնկայի (Սասաղա) ճանապարհը, որ Փոքր Ասիոյ այդ

(3) Անդ էջ 34: Հետաքրքրութեան համար աւելցնեմ, որ է. դարուն երբ Բիւզանդացիք Դամասկոսէն կը փոխադրէին Հերակլէս կայսեր դանձն ու հանդերձանքը, կը յիշուի որ անոնց մէջ կային «300 բեռ ներկուած մետաքս եւ ոսկեգիպակ»: (The History of the Saracens.— Simon Ockley, London, 1718, Vol. I. էջ 133): Դարձեալ 635-ի Նոյեմբերին երբ արաբները բիւզանդացիներէն գրաւեցին Հալէպ եւ ուրիշ քաղաքներ, վերջինները հաշտութեան ստիպեցին, դաշնագրին մէկ պայմանն ալ ընելով 200 մետաքս պարեգօսներուն արաբաց յանձնումը (Անդ էջ 178): Իսկ Բիւզանդացոց Հէրպիս հրամանատարը Պալպէք քաղաքին համար արաբներուն իբր փրկագին առաջարկեց 1,000 ունկի ոսկի, 2,000 ունկի արծաթ եւ 1,000 մետաքս պարեգօս, մինչ արաբները կրկինը կը պահանջէին (Անդ էջ 205): Մահմետականներու դբօշը կարմիր մետաքս էր: Օմարի ներկայացող սարակինոսները ճոխ կերպով մետաքսով զգեստաւորուած էին, որ մաս կը կազմէր Երմուզի յաղթութեան աւարին: (Հոս էր որ Մահման կամ Մանուէլ բիւզանդացոց Հայ սպարապետը արաբներէն պարտուեցաւ 636-ական թուականներուն): Օզլէյ իր «Սարակինոսաց Պատմութեան» համար մեծապէս օգտուած է էլ-Վազըրիէ, որ որոշ կը վեհայէ թէ 635-636-ին Դամասկոսէն երեսուն մղոն հեռուն կատարուած տոնավաճառի մը 10,000-նոց ամբոխին հայերն ալ մասնակից էին:

(1) The Outline of History, գրեց H. G. Wells, էջ 475: Մեր պատմիչներուն մօտ կը պակսի վիպութիւն ըստ որուն Զինացի վաճառականներ Հայաստան դանուած ըլլան: Սակայն էվլիայ Զէլէպի թուրք ուղեգիրը կը յիշէ, որ էրզրումի մէջ 1650-ական թուականներուն կային Պարսիկ, Հնդկի եւ Զինացի վաճառականներ, որոնք իրենց երկրին ապրանքները բերած էին: (The Travels of Evliya Efendi.— London, 1850, Vol. II) Հայր Ալիշան կը զրէ. «Ո՞ ոչ հաւանեցի՞ եթէ եւ ի հընազոյն կարաւանս Ասիոյ եւ դրակցի նորին Ափրիկոյ՝ զոյր եւ տարր հայկական, եւ ոչ փոքր, եւ 2000 ամօք մորթարեբաց ձենաց եւ թուրքաց», (Սխական, էջ 432 ա. սիւնակ): Նոյն առեւտ պէտք է խորհիլ, որ անբնական պիտի ըլլար Հայոց համար իրենց մեծահամբաւ Արտաշատի, Դուինի եւ այլ մանարաններու եւ ջուլահականոցներու պահանջ մեծաքանակ մետաքսը միայն ներածմամբ բաւարարել: Ես կը խորհիմ, որ Հայկովկաս ունէր այդ հին առեւտները ընդարձակ մետաքսագործութիւն, ինչպէս որ անոնց մեծաքանակ արտադրութիւնը՝ Ժե. դարէն սկսեալ յաճախ յիշատակուած՝ կասկածիլ կուտայ:

(2) Travels in the First Century After Christ. N By Caroline A. J. Skeel.— Cambridge, 1901, էջ 9: